Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 21-ի N 560 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԾԱԽՍԻ) ՆՈՐՄԱՆԵՐԻ ՈՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների (այսուհետ նաև՝ ռազմական նշանակության միջոցներ) կուտակման և շահագործման (ծախսի) նորմաների և շահագործման ժամկետների ձևավորման պայմանները, որոնց հիման վրա ենթակա են սահմանվելու ռազմական նշանակության միջոցների կուտակման և շահագործման (ծախսի) նորմաներն ու դրանց շահագործման ժամկետները:

2. Սույն կարգի իմաստով՝

1) սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (այսուհետ՝ ՋՈՒ) կարիքների համար ձեռք բերված և օգտագործվող՝

ա. տարբեր տեսակի զենքեր և դրանց մարտական կիրառումն ապահովող միջոցների համալիրներ, այդ թվում՝ տեղափոխման միջոցներ, ուղղորդման, արձակման, կառավարման համակարգեր, ինժեներական սպառազինության միջոցներ, ինչպես նաև այլ հատուկ տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են ՋՈՒ համալրելու համար, ռազմամթերք և դրանց բաղադրիչները, պահեստային սարքավորումներ և սարքեր, ուսումնական զենքերի մասեր, սարքեր և բաղադրիչներ (տարբեր տեսակի զենքերի և ռազմական տեխնիկայի կեղծ մոդելներ և սիմուլյատորներ), պահեստային գործիքներ և պահեստամասեր,

բ. ՋՈՒ-ում կիրառվող օպտիկական, ջերմատեսիլ, գիշերային տեսանելիության, տեղագրագեոդեզիական և նավարկային, ռադիոէլեկտրոնային, ազդանշանային, կապի միջոցներ, համակարգեր, սարքեր և սարքավորումներ, դրանք կրող տեխնիկա, էլեկտրոնային հետախուզական համակարգեր, ինչպես նաև զորքերի, սպառազինության ու ռազմական տեխնիկայի կառավարման համակարգեր,

գ. պայթուցիկ նյութեր, պայթեցման առարկաներ և սարքեր, վառոդ (բացառությամբ որսորդականի), մարտական հրթիռների հրթիռային վառելիք, հատուկ նշանակության նյութեր և դրանց արտադրության համար նախատեսված հատուկ սարքավորումներ,

դ. սպառազինության և ռազմական տեխնիկայի մարտական կիրառման համար նախատեսված սարքավորումներ,

ե. սպառազինության և ռազմական տեխնիկայի արտադրության, նորոգման, արդիականացման կամ ոչնչացման (օգտահանման) համար նախատեսված հատուկ սարքավորումներ և տեխնոլոգիաներ,

զ. ՋՈՒ-ի անձնակազմի անհատական պաշտպանական միջոցներ, անձնակազմի կենսագործունեության ապահովման համակարգեր, ռադացիոն սարքերի ստուգման չափագիտական սարքավորումներ, դրանց արտադրության համար նախատեսված հատուկ սարքավորումներ և սարքեր,

է. զանգվածային խոցման զենքից պաշտպանության համար նախատեսված միջոցներ (ռադիոքիմիական, կենսաբանական հետախուզության միջոցներ, հատուկ մշակման միջոցներ, ոչ սպեցիֆիկ կենսաբանական հետախուզության տեխնիկական միջոցներ, անհատական և կոլեկտիվ պաշտպանական միջոցներ, ծխային միջոցներ, հրանետային հրկիզող միջոցներ (համակարգեր),

ը. թիկունքային ապահովման հատուկ սարքավորումներ, տեխնիկական միջոցներ, հատուկ մասի բաղադրիչներ, հրթիռային վառելիք և վառելիքաքսուկային նյութեր ու հատուկ հեղուկներ, բոլոր տեսակի վրաններ, դաշտային շարժական բաղնիքներ, միջատազերծող ախտահանիչ սարքեր և սարքավորումներ, հրշեջ ավտոտեխնիկա, հրշեջ տեխնիկական միջոցներ, հակահրդեհային գույք և միջոցներ,

թ. ուսումնանյութական բազայի սարքավորումներ (զրահատեխնիկայի և հրաձգային զենքերի վարժասարքեր, հրաձգարանային սարքավորումներ, ուսումնանյութական բազայի օժանդակ այլ միջոցներ),

ժ. ավիացիոն տեխնիկան (օդանավավարվող և անօդաչու թռչող սարքեր, թռչող սարքերի շարժիչներ, թռչող սարքերի սարքավորումներ (հանովի և ստացիոնար, տեղադրված թռչող սարքերի վրա), ավիացիոն խոցման միջոցներ (ավիացիոն հրթիռներ և ռումբեր, բոցավառվող բաքեր, ականներ, ավիացիոն հրետանային զենքի փամփուշտներ և նրանց լրակազմող մասեր, խոչընդոտող հրթիռներ և փամփուշտներ, ծածկագիր-լիցքեր, ձայնի պայթյունային աղբյուրներ, հրատեխնիկական միջոցներ, ավիացիոն վարժասարքեր, անօդաչու թռչող համակարգերի բաղկացուցիչ մասեր, անօդաչու թռչող սարքերի ղեկավարման կայաններ, ղեկավարման կայանի սարքավորումներ և բաղկացուցիչ մասեր (հանովի և ստացիոնար, տեղադրված ղեկավարման կայանի վրա).

2) կուտակման նորմա է համարվում ՋՈՒ-ի խնդիրների ապահովման և գործունեության համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության տարեկան գնման պլանով նախատեսված ռազմական նշանակության միջոցների ձեռքբերումը.

3) շահագործման (ծախսի) նորմա է համարվում սպառազինությունը, ռազմական տեխնիկան և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցները ժամանակային (տարեկան) կամ ծավալային (քանակական) առումներով օգտագործելու (կիրառելու) թույլատրելի սահմանաչափը.

4) շահագործման ժամկետ է համարվում սպառազինությունը, ռազմական տեխնիկան և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցներն իրենց նշանակությանը համապատասխան օգտագործելու (կիրառելու)՝ սույն կարգի 4-րդ կետում նախատեսված հիմքերով սահմանված՝ ներառյալ շահագործման երկարաձգված ժամանակահատվածը, որի ավարտմամբ այդ միջոցը համարվում է իր նշանակությամբ օգտագործելու (կիրառելու) համար ոչ պիտանի:

3. Ռազմական նշանակության միջոցների կուտակման հիմք են հանդիսանում ՋՈՒ-ի խնդիրների ամենօրյա և հեռանկարային ապահովման ու գործունեության համար անհրաժեշտ ռազմական նշանակության միջոցների կարիքը

սահմանող ՋՈՒ-ի զարգացման պլանն ու սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը:

4. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների շահագործման (ծախսի) նորմաների ու դրանց շահագործման ժամկետների սահմանման՝ ներառյալ շահագործման ժամկետների երկարաձգման, համար հիմք են ընդունվում համապատասխան ռազմական նշանակության միջոցների գործարանային և տեխնիկական կանոնակարգերը (տեղեկագրերը), առկայության դեպքում՝ պետական ստանդարտները (ԳՈՍՏ), ծրագիր-մեթոդիկաները, ռազմական նշանակության միջոցի շահագործման ձեռնարկները (կանոնները), ինչպես նաև ռազմական նշանակության միջոցները նպատակային նշանակությամբ արդյունավետ, ծախսախնայող և երկարաժամկետ օգտագործման անհրաժեշտությունը: Ընդ որում՝ սպառազինության, ռազմական տեխնիկայի և ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցների շահագործման ժամկետները երկարաձգվում են՝ հաշվի առնելով ՋՈՒ-ի կողմից այդ միջոցների օգտակար օգտագործման (կիրառման) կարիքը և հնարավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ